


3440

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն



ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

Ռ Ա Մ Ռ Ո Յ

891.99
4-75

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

12 MAR 2011

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԻ ԳՐԱԿԱՐԱՆ

891.99

ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ

Կ-75

Ռ Ա Մ Ռ Ո Յ

1009
39687

4017

3440

Հ Ս Խ Հ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936



ԱԶՍՏ ՎՇՏՈՒՆԻ

Ազատ Վշտունին ծնվել է 1894 թ. Վանում, միջնակարգ կրթութունն ավարտել է Վանում, հետագայում սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանում իբրև ազատ ունկնդիր:

Գրելն սկսել է 1915 թվին: Աշխատակցել է ԹԻՖլիսում հրատարակվող «Պայքար» բոլշևիկյան թերթին: Առաջին գիրքը հրատարակել է 1917 թվին:

Սորհրդաչնացումից հետո ընկ. Ազատ Վշտունին Յերևանում մի քանի գրողների հետ միասին, հիմնադրում է Հայաստանի Պրոլետ. Գրողների Ասոցիացիան և հրատարակում է «Մուրճ» ամսագիրը, վորի շուրջն են համախմբվում մի շարք լեռիտասարգ պրոլետարական գրողներ:

Ազատ Վշտունին ճանաչված և իբրև Արևելքի ճնշված ժողովուրդների տաղանդավոր յերգիչ, նրա պոեմներում ու բանաստեղծութուններում իրենց արտացոլումն են գտել Իրանի, Չինաստանի, Հնդկաստանի աշխատավորների պայքարն ընդդեմ իմպերիալիզմի:

Ազատ Վշտունն ու գրվածքների հիմնական մասն ամփոփված են նրա «Յերկիր» ժողովածուի մեջ, վորը լույս տեսավ 1935 թվականին:



Հուլյգերիս հազարը քեզ տամ, լերգերիս հզորը քեզ տամ,
Գորշ կյանքիս լերեկը քոնն եր, վառ կյանքիս ետորը քեզ տամ.
Յերկիր իմ, հարազատ դու, Չինամաչին, իմ հարազատ դու,
Գիշերվա խավարը քոնն եր, արևշեկ կեսորը քեզ տամ:

Իմ յերգը հուլյգերիդ մեջն է, շրջում է խուռն շարքերումըդ,
Իմ յերգը պայքարիդ մեջն է, հնչում է կուռ զարկերումըդ,
Յերկիր իմ, իմ գովական դու, արևծին իմ գովական դու,
Վորքան դեռ հուր հրդեհներ կան հողումըդ, խոր ծալքերումըդ:

Վորքան դեռ զընդուն յերգեր կան, վոր բարձր ու հըն-
չուն յերգես դու,
Վորքան ցավ ու վերքեր կան, վոր վաղը հպարտ
հերքես դու,
Յերկիր իմ, արնահեղեղ դու, շահող, արնահեղեղ դու,
Վորքան դեռ ձիգ փողոցներ կան, վոր ալ ու արնով
ներկես դու:

Գալարվում եր յերեկ սիրաբա ծանր ու խոր քո հառա-
ջիցը,
Իսկ այսոր վառ յես հարբել եմ հաղթ ու գոռ քո
շառաչիցը,
Կուլի՛ դու, չարքաշ կուլի՛ դու, յերկիր իմ, զարթնած
կուլի՛ դու,
Յես քայլում եմ միլիոնի հետ շարքերիդ միշտ առա-
ջիցը:

2

Շանհայի փողոց:

Ամառ:

Կեսոր:

Գործադուլ:

Ցույց ե:

Ցնցում:

Հնձում ե գնդացիքն հսոր

Բանվորին,

Գյուղացուն

Հնձում:

4

Զարթնել ե կուլին չարքաշ
Քնիցը

Գերող

Ու խոր:

Զինմաչինը

Հուր ե հիմի:

Որերը —

Պալքար,

Ժխոր:

Զինը

Զնչին չի հիմի,

Փշրվող ու նուրբ

Զինի չի:

Զինը

Հինը չի հիմի,

Քնաբեր ու մեղկ

Գինի չի:

Շանհայի փողոցումն հսոր

Հորդում ե կյանքը բոցված:

Մռնչում ե առյուծը հզոր,

Միրտը խոր ու խոր խոցված:

Շարժվում են շարքերը փողոցով:

Ծով ե փողոցը յերթով:

Փակել են զրոշներն ալիուր:

Փողոցը թնդում ե յերգով:

5

—Յեղեք,
Ում կյանքը տանջանքով լի չէ,
Ով վոր բանվոր-կուլի չէ,
Մեքենավար,
Նավաստի,
Դարբին,
Հնձող,
Առաջ,
Առաջ,
Առաջ:

3

Բանկերը
Լոնդոնի,
Տոկիոյի
Ետը գնդակով են խոսում:
Շանհայի փողոցումն ետը
Չինների արջունն է հոսում:

Կանգնած հնդիկ զինվորներ հիսունմեկ—
Դեմ առ դեմ շարքերի անանց.
Գնդակի յեն բռնում անխնա
Ծերերին,
Փոքրերին,
Կանանց:

Մի ջահել սպա սպիտակ—
Յեկած Լոնդոնից հեռավոր,
Տալիս է հրաման կտրուկ—
Անդադար
Կրակ,
Կրակ:

6

Կանգնած հնդիկ զինվորներ հիսունմեկ—
Դեմ առ դեմ շարքերի անանց.
Գնդակի յեն բռնում անխնա
Ծերերին,
Փոքրերին,
Կանանց:

4

Մեկը հիսունմեկ զինվորից,
Ռամ Ռոյը—հնդիկ զինվոր,
Հրացանը ձեռքին բռնած,
Կանգնել է մտածկոտ ու լուռ:
Յեվ հենց այդ դաժան ժամին,
Թռչում է Շանհայից հեռու
Խոհուն միաքը Ռամ Ռոյի,
Ռամ Ռոյի հողին լեռուն:

Հե հեյ, հեռավոր Հինդու ,
Բիխուրի գավառում փոքրիկ,
Հայրենի գյուղն է լերեւում,
Գյուղը—աշխատող ու սոված:
Յեվ անա գյուղի վերևում,
Գանդեսի ափին կպած
Յեղեգնյա խրճիթը Ռամ Ռոյի,
Տկլոր ֆաքիրի նման
Իր բախտին կամ մահվան սպասող:

Ռամ Ռոյը տեսնում է կարծես,
Կարծես տեսնում է
Ահա —

7

Ձոր խորի վրա պառկած
Իր կինը հյուժոված և հիվանդ:
Յերկու մանչուկներ մատղաշ
Նստել են հեքոտ մոր կողքին
Յեվ ինչպէս,
Ինչպէս ուղեն մայրիկից
Մի պատառ չոր հաց:

Ամեն առավոտ-իրիկուն,
Կարոտով,
Կսկիծով մանկական
Հիշում են իրենց հորը—Ռամ Ռոչին,
Հիշում են կարոտով ու լալիս:
Յեվ հարց են տալիս մորմոքով
Մահամերձ և անճար մայրիկին.
Մայր,
Ո՞ւր ե,
Ո՞ւր ե մեր հայրը,
Ել ինչի՞,
Ինչի՞ տուն չի գալիս:

Ե՛լս,
Ռամ Ռոյը ինչպէս չհիշի,
Թե քանի միտեր ու սիբ
Հինդը շինել են մի խտր
Ու նստած քեֆ են քաշում:
Յեսիր ե Հինդը հիմի,
Շղթայված,
Իր կյանքն ե մաշում:

Ե՛լս,
Ռամ Ռոյը միթե չգիտի,
Թե քանի միա ու ուշա
Խեղդում են խալխին անճար:
Միտերը,
Միան
Ու ուշան
Քամում են քրտինքը խեղճի:
Գողանում, տանում են անճայն
Խալխի շապիկը վերջին:

Ե՛լս,
Ռամ Ռոյը ինչպէս չհիշի,
Թե քանի քանի անգամ
Դրել են գնդացիը մահաբեր
Չարքաշ հին Հինդի սրտին:
Յեվ քանի բանվոր-գյուղացի
Ընկել են գնդակիցը խոցող.
Ու գեռ քանիսը կընկնեն,
Սրտերը վրեժի բոցով:

Ռամ Ռոյ,
Հեյ հնդիկ վինվնր,
Տերդ անաշխատ ու դաժան
Յերկրումդ հարազատ քեզ գերեց:
Քեզ Շանհայ բերեց,
Ինչի՞.—
Վոր յերբ Չինի կանչը հնչի,

Յերբ թնդա սիրաւ Չինի,
Չինի քեզ,
Դահիճ շինի:
Յեմ հրաման տա,
Առնջ,
Կրակ:

Ռամ Ռոյ,
Հեյ հնդիկ զինվոր,
Միթե կրակես դու պիտի,
Կրակես չարքաշ շիների վրա:

5

Թռչում են զնդակները կարկուտ
Դեպի շարքերը շիների:
Չինմաշինը լերբեք չի ների
Սպանդն այդ դաժան և անզուրթ:

Չինմաշինը լերբեք չի ների
Դահիճին դավադիր ու դաժան,
Վոր ըմբոստ ու կուռ շիների
Արշունը թափեց փողոցում:

Գնդակները նորից են թռչում:
Անվրեպ:
Ուղիղ:
Համազարկ:

Անդեն—շարքերը շիների:
Բայց լքում չկա:
Չի լինի:

10

Թող տեղա կրակ մահատու:
Թող հնձի հազարը հիմի:
Բայց կզան նորերը հատու,
Վերջին պայքարը կլինի:

Գնդակները թռչում են կրկին:
Գնդացիքը հուր և ցանում:
Հիսուն զինվորները հնդիկ
Մարդկանցիցը հունձք են անում:

Ահա ուսանող մի ջահել
Փռվել և փոշումը գետին:
Յեմ քերում և հող արնաներկ,
Հեռւմ և շնչովս իր հետին:

Ընկավ մի կուլի վերք առած.
Գլխիցն ալ արցուն և հոսում:
Հայացքը հեռուները հառած,
Ինչ վոր գառանցում և, խոսում:

Ահա արնաքամ զիակներ—
Մայթերի վրա դիմացի:
Մահվան խոր քնով են քնել
Կուլիները չարքաշ շինացի:

Մի տասը տարեկան չին տղա—
Կիսամերկ,
Բորիկ,

11

Նուշ աչքով,
Սզմած բոունցքները փոքրիկ,
Կանգնել ե բանվոր հոր կողքին:
Յեվ հանկարծ գնդակ մի մահու
Ծակեց խոր կուրծքը չին տղի,
Յեվ ընկավ նա կուրծքը բռնած,
Ճշարով նվաղ.
— Ասածախ,
Հայրիկի՛հ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:
Յեվ թվաց նրան վոր իրավ
Իր մանկիկն եր նա հարազատ—
Ընկավ վիրավոր ու մեռավ:

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի:
Հիշեց հայրենիքն իր Հինդ—
Պինդ շղթաներով շղթայված:

Հիշեց մանկիկներն իր անտեր,
Վոր գուցե մեռել են քաղցից:
Յեվ կամ հենց գուցե այդ ժամին—
Նրանք ել ընկան արնաքամ...

Գալարվեց սիրտը Ռամ Ռոյի,
Աչքիցը կայծեր են հորդում:
Կարծես այն փոքրիկ չին տղան
Այնպէս նման եր իր վորդուն:

Կարծես այն փոքրիկ չին տղան
Այնպէս նման եր իր վորդուն:
Իր վորդու սրտիցն ե կարծես
Ալ-կարմիր արյունը հորդում:

Յեվ սրտունն ահա Ռամ Ռոյի
Ճշում ե սուր ձայն մի ծանոթ.
Կարծես իր մանկան ճիչն ե այն.
— Ասածախ,
Հայրիկի՛հ,
Ամսթ քեզ,
Ամսթ:

Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց:
Ինչ վոր մի բիրա ձեռք առնական
Պոկում ե իր սիրտը տեղից:
Ռամ Ռոյը ցավիցը ցնցվեց:
Յեվ հանկարծ թափով վճռական
Կանգնեց ուղղաձիգ,
Լուռ ե սեզ:
Յեվ կանչեց խրոխտ,
Բարձրականչ.

— Հեյ,
Հնդիկ զինվորներ,
Ինձ լսեք:

Հեյ,
Հնդիկ զինվորներ,
Ինձ լսեք:

Լսեք,
Յեղրայրներ իմ անգետ,
Կանգ առեք,
Կանգ առեք,
Կանգ առեք:

Կանգ առեք,
Ել մի կրակեք ձեր յեղրայրների վրա.
Ձեր վորդիների,
Քույրերի
Ու ձեր հայրերի վրա:

Լսեք,
Յեղրայրներ իմ անգետ,
Կանգ առեք,
Ել մի կրակեք:

Սհա կանգնել եմ յես անվախ,
Կրծքարաց կանգնել եմ ձեր առաջ.
Ու յես կմեռնեմ անհառաջ,
Թե վոր գնդակները ձեր թեփ
Խրվեն կրծքումս անվրեպ:
Կրակողը չեմ յես յերբեք
Չարքաշ չիների վրա:

Վրեժիցը մեր մահաբեր
Դողա թող սպան մեր դաժան:
Թող մեր գնդակները խոցող
Սուլեն ու թուչեն և խոցեն
Կրծքերը մեր բիրտ սերերի:

Իսկ յես կրակողը չեմ յերբեք
Չարքաշ չիների վրա:

Շփոթ ե տիրել շարքերին:
Հիսուն զինվորները հնդիկ
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Յեվ հնչեց հրամանն սպայի.
Գնդակել նրան.
Կրակ:

Հիսուն զինվորները հնդիկ
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Հրամանը նորից ու նորից.

— Լսում եք,

Պատրաստ,

Կրակ:

Հիսուն զինվորները հնդիկ
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Դողում ե խուլ ձայնն սպայի.

— Հեյ դուք զինվորներ հնդկացի,

Հիշեցեք,

Հինդում հեռավոր

Ձեռքումս պատանդ եք թողել

Ձեր հայրերը ծեր ու վորդիք:

Լսում եք,

Կրկնում եմ,

Կրակ:

Պարզվեցին հրացանները հիսուն
Դեպի կուռ կուրծքը Ռամ Ռոյի:
Հրամանը համառ վորոտաց:
Յեվ հրացաններեցը հիսուն
Սուլեց զիւ միայն հինգ զնդակ:

Որորվեց Ռամ Ռոյը գունատ:
Մահամերձ փովեց չոր գետնին:
Դեմքին դողում է գառն ժպիտ:
Հայացքը ներող ու մարող—
Դեպի զինվորները հնդիկ:

Իջան հրացանները հիսուն:
Հիսուն զինվորները հնդիկ
Կանգնել են անշարժ ու մռայլ:

Յեվ ընկավ Ռամ Ռոյը գունատ:
Մահամերձ փովել է գետին:
Դեմքին գեռ դողում է ժպիտ:

Ձեռքը պինդ սղմած խոր վերքին,
Սողում է առաջ ու առաջ
Դեպի շարքերը չինների:
Սողում է,
Հեռւմ
Ու նորից:

Դողում է,
Հեռւմ
Ու նորից:

Մտտիկ շարքերին չիների,
Փողոցի փողումը փոված,
Սամբել է փոքրիկ չին աղան,
Ինչպես մի ծաղիկ արորված,
Յեվ վեշտը սառել է դեմքին:

Ռամ Ռոյը ժպտով գառնազին,
Սողում է առաջ ու առաջ,
Դեպի չին աղան արնաքամ:
Սողում է,
Հեռւմ
Ու նորից:
Դողում է,
Հեռւմ
Ու նորից:

Մեղմ շշուկ:
Թախիծ:
Լուսթյուն:

Հիսուն զինվորները հնդիկ
Կանգնել են ախուր ու մռայլ:

Յեվ ահա Ռամ Ռոյը հնդիկ
Կարոտով գրկեց չին աղին,

4017
1009
39687



Ինչպես իր վորդուն հարազատ:
Կարծես շնչում և կամաց.
—Յես և դու ընկանք կովումն այս,
Վոր Չինը լինի միշտ ազատ:

Հուլիներ ժրրիկ:
Հորդ հորձանք:
Կարծրացան շարքերը կրկին:
Վրեժի կանչեր ու գրգիռ:

Ավելի հզոր և հիմի
Թափը թնդացող շարքերի:
Բյուր սրտեր ձուլված են ի մի:
Լսում եք ձայնը դարկերի:

Ավելի խրոխտ և հնչում
Մարտական կանչը չիների.
—Չինմաչինը չերբեք չի ների
Դահճին հավաղիլը ու դաժան,
Վոր ազատատենչ չիների
Արլունը թափեց փողոցում:

Ավելի դաժան և հնչում
Հիմի ուղմերգը չիների.
—Յելեք
Ում կյանքը տանջանքով լի յե,
Ով վոր բանվոր-կուլի յե,
Մեքենավար,
Նավաստի,
Դարբին,

Հնձող,
Առնջ,
Առնջ,
Առնջ:

Ինչպես հայր-վորդի հարազատ —
Ռամ Ռոլը, գինվորը հնդիկ
Ու տաս տարեկան չին տղան
Գրկել են իրար անբաժան:

1925
Հունիս
Մոսկվա



Պատ. ըմբ. Ս ի ր ա ս
Տեխ. խմբ. Տ. Խ ա չ վ ա ն ը ղ ա ն
Սրբագրիչ Հ. Գ ո լ ու խ ա ն ղ ա ն

Գլավիտի լեռորդ Կ-1091, Պատվեր 527,
Հրատար. 3689, Տիրած 3000
Պեհրատի տպարան
Յերևան, Մ Գ ն ու ն ի, 4

Հանձնված է արտադրության 1936 թ. ապրիլի 7-ին
Ստորագրված է տպելու 13-ին ապրիլի 1936 թ.

Գ Ի Ն Ը 30 ԿՈՊ.

АЗАТ ВШТУНИ
РАМ РОЙ
ГИЗ ССР Армени, Эривань

«Ազգային գրադարան»



NL0367002

57711

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

